

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՓՅՈՒՌՔ
ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ**

*Հովհաննես Բարսեղյան
Հայաստան*

Առաջին մաս
Դրական գործոններ և ձեռքբերումներ

1. «Հայոց լեզվի պատմությունը» կայացած և համաշխարհային ճանաչման արժանացած գիտակարգ է: Նրա տարբեր փուլերի ու լեզվական տարբերակների (նախագրային հայերեն, հին, միջին, նոր գրական հայերեններ, հայ բարբառներ) խոր ու համակողմանի ուսումնասիրությունները հայ ժողովրդի համազգային ձեռքբերումներն են: Այդ նվաճումներում Հայաստան-Սփյուռք տարբերակում չկա և չի կարող լինել:

2. Եթե լեզվի ստեղծողն ու տերը ժողովուրդն է, ապա ժողովրդի տերը *պետությունն է*: Հայոց լեզվի պատմության հիմնահարցերի հետագա լուծման ամենակարևոր գործոնը Հայաստանի Հանրապետության անկախացմամբ՝ հայերենի իրապես պետական լեզու հռչակվելու իրողությունն է: Իհարկե, չեն կարող այդ խնդրում չկարևորվել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստական անկախացման գործոնը, ինչպես նաև Հայաստանի երեք հանրապետությունների ողջ պատմությունը: Այստեղ էլ Հայաստան-Սփյուռք տարբերակում չկա: Չէ՞ որ թե Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման, թե Երկրորդ հանրապետության, թե Արցախյան ազատագրական շարժման մեջ իրենց մահով անմահացածների շարքում նաև Մոնթե Մելքոնյաններ կան:

3. Թեև լեզուն ժողովրդով ու ազգով է միայն լեզու, բայց և այն զարգացնողն ու կատարելագործողը դրան ընդունակ անհատներն են եղել: Վերջին 2-3 հարյուրամյակների հայ ազգային գաղափարախոսության այդ մտքի ամենահստակ սահմանումը վիպասան Րաֆֆու այս ձևակերպումն է. «Մենք ամեն ինչ դպրոցից ենք սովորում, բայց ժողովուրդը ինքը մի մեծ դպրոց է, որին պետք է կրթել, որին պետք է ուղղություն տալ, որի մեջ պետք է զարգացնել առողջ միտք, բարձր գաղափարներ, որի մոլորությունները և կեղտը պետք է մաքրել: Իսկ դա այլ կերպ չէ կարող անել, եթե չենք տա նորա ձեռքը ընթերցանության գիրք: Եվ այդ գրքերից ամենազորեղ կերպով ազդում է նորա վրա վեպը, բանաստեղծությունը: Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ»¹:

Րաֆֆին իր այս ձևակերպումներն արել է այժմ Սփյուռքում գտնվող իր բնակավայրում: Հետևաբար հայերենի ազգային գաղափարաբանության մեջ ևս Հայաստան-Սփյուռք տարբերակում չկա: Գալով հայ վեպի, բանաստեղծության, այլև պատմվածքի ու թատերգության ձեռքբերումներին, ապա սրանց միայն համաշխար-

հային թարգմանությունների մատնանշումով կարող եք հարցի ձեռք և մեր պատասխանը սպառած համարել:

4. Ի՞նչ լեզու, ի՞նչ լեզվի պատմություն, եթե ազգը չունենա ազգային դպրոց և լեզվի ու գրականության ծրագրված, դպրոցական ուսուցում: Այդ հանգամանքը մեզանից լավ գիտեր նաև Մեսրոպ Մաշտոցը: Նկատի ունենալով հայոց ողջ պատմության հետագա ընթացքը՝ հանձարեղ թուրքացիները դեռևս 1910 թ. այդ մասին գրում էր. «Դաժան վիճակն ու երկարատև խավարը դարերի ընթացքում շատ աղետ ու կեղտ են կուտակել մեր կյանքի ու հոգու վրա, բայց մենք կուլտուրաներ ունեցած ու ապրած ժողովուրդ ենք, հեշտ կարող ենք թոթափել մեզանից էդ ամենը և նորից կանգնել մաքուր, առողջ ու բարձր: էդ հրաշքը կարող ենք կատարել միայն դպրոցի և գրականության միջոցով, իսկ դպրոցն ու գրականությունը անբաժանելի հասկացողություններ են:

Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ»²:

Հայոց դպրոցի փառավոր պատմությունը, որը նույնպես Հայաստան-Սփյուռք հատվածայնություն չունի, հայոց լեզվի, ուստի և նրա պատմության ևս մեկ կարևոր ձեռքբերումներից է:

5. Ձարմանալի կլիներ, եթե այս բոլոր ձեռքբերումները պատեցնելով լեզվի ու նրա պատմության շուրջը, մենք էլ այս գործի մեր բոլոր ուսուցիչների պես չասեինք, որ հայի ազգային գոյության *ամենամեծ ձեռքբերումը հենց ինքը հայոց լեզուն է:*

Երկրորդ մաս

Կորուստներ և չիրականացված ծրագրեր

1. Հայագիտության ասպարեզում ամենամեծ կորուստը վերջին երկու-երեք տասնամյակների՝ համարյա ասպարոյուն անցած, *ժամանակի կորուստն է.*

Համեմատական հայագիտության մեջ այսօրվա նոր սերունդը դարձել է դասական հայագիտության փաստական ու տեսական հայտնագործությունների անվարժ կրկնող միայն:

Հայերենագիտական որոշ ճյուղերում գիտական քննությունը իջել է սիրողական աստիճանի, ընդօրինակումները, եթե չասենք գրագողությունը, մեռցնում են հեղինակային իրավունք հասկացողությունը:

Հայը թեև շարունակում է մնալ բարբառախոս (մեր գրական շքեղ հայերենը նույնիսկ պաշտոնական գործառնության մեջ հետադիմում է), սակայն հայ բարբառագիտությունն անուշադրության է մատնված. Հայաստան-Սփյուռք, միասին վերցված, այսօր միայն մեկ գիտության դոկտոր բարբառագետ ունեն, նա էլ իրեն ավելի շատ խեթագետ է համարում:

2. Լեզվի պետական կարգավիճակը կա, բայց նրա պետական հոգածությունը թողնված է շուկայական հարաբերությունների հույսին: Մեր հարյուր քսան կուսակցությունների խելոքներն ասում են, թե դրա պատճառն այն է, որ ինքը՝ պետությունը, դեռևս կայացած չէ: Մինչդեռ ռուս քաղաքագետ Իրինա Խակամադան պնդում է, որ մեր նման քաղաքակիրթ ազգի համար տասը տարին էլ լիովին բավական էր պետական կայացման հասնելու համար, եթե ինքներս իրար պաշտոնամոլությամբ չհրմշտեինք ու չխանգարեինք:

3. Ոչ միայն Ռաֆֆին, այլև շատերը գիտեն, որ «Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ», բայց ինչպե՞ս իմանա մարդ, թե գրքերով ու գրքերի շնորհանդեսներով լի այս Հայաստանում ո՞ր գիրքն է փրկողը, ո՞րը՝ կործանողը. այս էլ այն պարագայում, երբ աշխատավոր մարդը աշխատանք ու իր երեխային մի կտոր հաց ճա-

րելու ամենօրյա հոգսով է զբաղված, երբ հայերենի ամենագործածական բառն այսօր ոչ թե **գիրքն** է, այլ **ընտրակաշառքը**:

4. Եթե «դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը» (Հ. Թումանյան), իսկ դպրոցը դպրոց է լավ ուսուցչով, ապա Հայաստանում առանց պետական հոգածության, աղքատ համայնքների հույսին թողնված դպրոցն ու ուսուցիչը լավ օր, քան այսօրվանն է, չեն կարող ունենալ: Դպրոցը չլքած նվիրյալները հաց ունենալու հոգսի մեջ են, մինչդեռ ուսուցչական աշխատանքի անունից ճամարտակող պաշտոնյաները տասնամյակներով մշակված դասագիրքն առել են ուսուցչի ձեռքից, փոխարենը տվել են մի խառնաշփոթ հարցաշար կամ աշակերտների բառով ասած, ինչ որ «թարսագրքեր»:

Տասը-տասնհինգ տարի է, ինչ, հայ դպրոցի և ուսուցման նախկին ձեռքբերումները շրջանցելով, այդ գործին ոչ պիտանի պաշտոնյաները «վերակառուցման» լայն ծրագիր են իրագործում և դեռևս չեն կարողանում հասնել՝ գիտության ու կրթության իրենց կորցրած միջազգային չափորոշիչներին: Հ.Պարոնյանը կասեր՝ «քաշելիք ունինք եղեր»:

5. Հայոց լեզվի պատմությունը, ինչպես ամեն մի ճշմարիտ գիտակարգ, չի կարող իրական կանխատեսումներ չառնել: Սրանից ավելի քան չորս տասնամյակ առաջ էդ. Աղայանը գրել է. «Հայոց լեզվի պատմության բնագավառում (...) անհրաժեշտ է մանրակրկիտ ռեզոնանսային հետազոտություններով լուսաբանել անցման էտապները, մի կողմից, և ավելի շատ զբաղվել կենդանի խոսակցական լեզվի տվյալների ուսումնասիրությամբ, մյուս կողմից»³:

Գիտնականի առաջին կանխատեսումը իրագործված է իր իսկ ակտիվ մասնակցությամբ: Հարաբերակցային քերականության սկզբունքներով, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ջանքերով ստեղծվել է «ընդհանրական լեզվաբանական կադապար», որը կիրառվում է նաև հայերենի ու նրա քերականական կառուցվածքի ուսումնասիրման ասպարեզում: Բայց Աղայանի երկրորդ ցանկությունը, այն է «ավելի շատ զբաղվել կենդանի խոսակցական լեզվի տվյալների ուսումնասիրությամբ», մնում է իբրև չիրագործված ծրագիր: Այս խնդրում էլ Հայաստան-Սփյուռք տարբերակում չկա: Ամեն տեղ հայը միայն իր *կենդանի խոսակցական լեզվով է հայ*: Հետևաբար դրանից ավելի առաջնային ու կարևոր ուսումնասիրվող հարց հայոց լեզվի պատմության համար չի կարող լինել: Թեև սա չի նշանակում կենդանի լեզվի տարբերակները հակապատմական միջամտություններով «միավորման» փորձադաշտ դարձնել:

6. Հայերենի ոչ անցյալի, ոչ էլ ներկայի վերաբերյալ նոր կանխատեսումներ, առավել ևս աստղագուշակություններ անելու կարիք չկա, թեև այդպիսի նոր աստղագուշակներ էլ են հայտնվել: Հրաչյա Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն»⁴ գարմանալիորեն ընդգրկում և փաստալից աշխատության վերջնական դաժան եզրակացությամբ՝ Սփյուռքի հայության գալիք սերունդները դատապարտված են այլախոս դառնալու, և որքան թուլանան Հայաստան-Սփյուռք կապերը, այնքան արագ պիտի տեղի ունենա այդ լեզվափոխության անցանկալի գործընթացը: Ուրեմն հայերիս համար Մեծ Բրիտանիայի գիտնականների վիճակագրական հաշվարկը, ըստ որի՝ «Աշխարհի լեզուները կենդանիների հազվագյուտ տեսակներից արագ են անհետանում»⁵, մեծ հայտնություն չէ:

7. Այո, ազգը ազգ է իր երկրով, իր հողով ու ջրով, իր պետականությամբ: Հայաստանում չկա այս ճշմարտությունը չճանաչող, չհասկացող և ո՛չ մի կուսակցություն, ոչ մի խմբակցություն: Հայապահպանման ասպառ ծրագրերի ողջ իրագործման պատասխանատվությունը կրողը Հայաստանի Հանրապետությունն է՝ իր պետական-ռազմական, դատական-իրավական, հոգևոր-եկեղեցական, հասարակական-քաղաքական կառույցներով: Գալով հայի և հայության հարատևման գաղափարին

ես, ունկնդիր հայոց անցյալի հանճարների ծայնին, հազարամյակների խորքերից լսում եմ հայության հավերժ գոյատևման գաղափարաբանությունը վերահաստատող կանչեր, որոնք սակայն չեն մոռանում ինձ նմաններին նաև հիշեցնել երկու բան.

ա) Գարեգին Նժդեհի՝ ասույթ դարձած հետևյալ խոսքը՝ «Անկախ հայրենիքը միշտ էլ նահատակների սրբազան արյունից է բարձրանում»:

«Կրոնական երկյուղածությամբ և անսահման քաղցրությամբ պիտի դասավանդվի հայերենագիտությունը»:

բ) Վիպասան Րաֆֆու հետևյալ պատգամը՝ «Կա մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերը հոգվով, մտքով և արյունով, այն է ԱԶԳԱՅԻՆ ՍԵՐԸ»:

8. «Հայոց լեզվի պատմությունը» գիտություն է, ուստի այն պետք է ստեղծվի, ընկալվի և դասավանդվի որպես ճշմարիտ գիտություն: Նա ոչ միակուսակցական, ոչ էլ բազմակուսակցական քարոզչության առարկա չպիտի դառնա: Լեզուն ժողովրդինն է, կուսակցականությունը, ըստ այդմ՝ Հայաստան-Սփյուռք հատվածայնությունը խորթ են նրա էությանը:

Գրականություն

1 Տե՛ս *Րաֆֆի*, Երկերի ժողովածու, հ. 6-րդ, Կայծեր, Երևան, 1986, էջ 424:

2 Տե՛ս *Յ. Թումանյան*, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, Եր., 1995, էջ 51:

3 Տե՛ս *Էդ. Աղայան*, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 20:

4 Տե՛ս *Հրաչյա Աճառյան*, Հայ գաղթականության պատմություն, Եր., «Զանգակ - 97», 2002:

5 Տե՛ս «Ազգ» օրաթերթը, 17 մայիս 2003, էջ 5: